

1938

ԳՅՈՒՂԱՑՆՑՆԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՍՏՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ

Ն. Կ. ՆԱԴԵԺԻՆ

ԲԱՄԲԱԿ ՑԱՆՈՂ,
ԲԱՄԲԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՑԱՆԻՐ.
ՀԻՇԻՐ, ՎՈՐ ՈՒՇԱՑԱԾ ՑԱՆՔԱԸ
ՊԱԿԱՍ ԲԵՐՔԱՏՈՒ ՅԵ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1931

G33

G-14

09 JUL 2013

633

4-14

18486

24 SEP 2010

ԲԱՄԲԱԿ ՑԱՆՈՂ, ԲԱՄԲԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՑԱՆԻՐ
ՀԻՇԻՐ՝ ՎՈՐ ՈՒՇԱՑԱԾ ՑԱՆՔԸ ՊԱԿԱՍ
ԲԵՐՔԱՏՈՒ ՅԵ

Խորհրդային Միութիւնը, վոր բռնում ե աշ-
խարհիս մեկ վեցերորդ մասը, խիստ տարածված
մի յերկիր ե: Հյուսիսից նա հասնում ե ասիայի
շրջաններին, ուր մշտական ձյունն ու հալիտեհա-
կան սառուցն ե փռված. հարավում ընկած են
Անդրկովկասյան հանրապետութիւնները, վորտեղ
գրեթե տարին բոլոր պայծառ արևն ե ժպտում
և ուր բուսնում ու աճում են ամենանուրբ և
ամենից ավելի տաքութիւն սիրող բույսերը:

Խորհրդային Միութիւն անտեսական հզորու-
թիւն համար, յուրաքանչյուր հանրապետութիւն
և ամեն մի շրջան պարտավոր ե մաքսիմում չա-
փով ոգտագործել այն բնական պայմանները, վո-
րոնցով ոժտված ե տվյալ հանրապետութիւնը
կամ շրջանը:

Այս տեսակետից Անդրկովկասը, իւր խոշոր
հնարավորութիւններով, աչքի ե ընկնում. Շնոր-
հիվ մեր տաք կլիմայի, մենք կարող ենք ասիայի
բույսեր մշակել, վորոնք շատ արև և տաք կլիմա

Գրառեպար № 6252 (բ). պատ. № 1329 տիրաժ 8000

Պետերատի տպարան Յերևանում

38106-12

յեն պահանջում: Այդպիսի բույսերից ե նաե բամբակենին:

Քանի վոր բնական-կլիմայական պայմանները հնարավորութիւն են տալիս բամբակի կուլտուրան մեզանում զարգացնել ու բարձրացնել՝ մենք պարտավոր ենք նույն ալդ կուլտուրայի զարգացման համար ստեղծել աջակցի պայմաններ, վորոնց դեպքում կկարողանանք լավագոյն վորակի առավելագոյն բերք ստանալ: Այդպիսով բամբակ ցանող գյուղացին, թե ինքը ավելի շատ արդիւնք կստանա և թե պետութեանը կտա լավ վորակի, նուրբ մանվածք, վորոնցից խորհրդային գործարանները ընտիր - ընտիր գործվածքներ կպատրաստեն:

Բայց ալդ ինչպես անել:

Դրա համար հարկավոր ե իմանալ մշակվող բույսի, այս դեպքում, բամբակի առանձնահատկութիւնները: հարկավոր ե իմանալ, թե բամբակենին ինչ պայմաններում առավելագոյն բերք կարող ե տալ:

Վորոք են բամբակենու առանձնահատկութիւնները:

Ամեն մի բամբակացանի հայտնի ե, վոր բամբակի բերքը կախված ե ախ բամբակենու կնգուղների (կոկոններ) ընդհանուր քանակից, վորոնք գոյանում են տունկի վրա ամառվա ընթացքում,

բացվում են աշնան ընթացքում: Այս վերջին հանգամանքը առանձնապես կարեւոր ե:

Բամբակ ցանող գյուղացին իր ուշ ցանքսով բամբակենուն զրկում ե նրա կանոնավոր զարգացման համար անհրաժեշտ ժամանակամիջոցից, վորի հետևանքով բամբակենու կնգուղները, վորոնցով տունկերը ամբողջապես ծածկում են դեռ ևս չբացված սառնամանիքից չորանում են: Նույնը լինում ե նաե ցանքսի անկանոն խնամքի դեպքում: Չափազանց շատ ջրելու դեպքում բամբակենու տունկերը խիստ մեծանում են և ծածկվում հսկայական քանակութեամբ կնգուղներով: սակայն վրա լեն հասնում աշնան սառնամանիքները, մըրսեցնում են բամբակենուն և կնգուղները դեռ չբացված—սառչում, վոչնչանում են:

Թե բամբակենուն ինչպես պետք ե խնամել կարելի ե մի ալլ զրքում կարդալ: իսկ մենք ախտեղ մի փոքր զրուցենք ախ մասին, թե բամբակի ցանքսը լերբ պիտի կատարել: Այս զրքուկով բամբակացան գյուղացին կիմանա ու կսովորի, թե բամբակը լերբ պետք ե ցանել, թե նա ինչպիսի արդիւնք կստանա իր ժամանակին կատարված բամբակացանից և կամ՝ թե ստանալիք արդիւնքից վորքան կորուստ ե նա ունենում—լերբ ցանքը իր ժամանակին չի կատարում:

Բամբակ ցանող, այս զրքուկը ուշադրութեամբ

կարդած, լավ միտդ պահիր կարդացածդ և արա
ախպես, ինչպես քեզ խորհուրդ կտա այս գիրքը:
Կարդացածիդ մասին պատմիր ընկերոջդ ու հա-
րեանիդ և քու սեփական արտում ցուց տուր իր
ժամանակին կատարածդ բամբակացանի ցանկալի
արդյունքը:

Բամբակացանը իր ժամանակին կասարե-
յու համար անհրաժեշտ է հողը պատրաստել նա-
խորդ:

Գյուղացին, շատ հաճախ ուրախությամբ
ցանքսը կկատարի իր ժամանակին, լեթե միայն
նա հարկավոր նախապատրաստութիւն ունենար:
Բանը նրանումն է, վոր նա, ընդհանրապես գար-
նանը արտի հերկել ու պատրաստելը ժամանակին
չի հասցնում: Վրա է հասնում գարունը. նա մինչև
կոկորդը թաղված է աշխատանքների մեջ և հերկը
դեռ ևս պատրաստ չէ: Աշխատանքներում սկսվում
է շտապողութիւն. իսկ ձեզ հայտնի է, վոր
շտապելու դեպքում աշխատանքի վորակը զգալի-
որեն տուժում է: Ուստի, լավ յե՛վ առաջ բեր-
ւածնայու համար հարկավոր է՝ բոլոր անհրա-
ժեշտ բաները պատրաստել իր ժամանակին յե՛վ
պահանջող աշխատանքները կասարել այնպես,
ինչպես վոր պէտք է:

Ցանքսի համար ինչպես պետք է պատ-
րաստվել:

Բուլսի կյանքը սկսվում է այն բողբոջից, յերբ
սերմը գցում են հողի մեջ: Վորպեսզի բամբակի
բույսը լավ աճի ու զարգանա, հարկավոր է, վոր
հենց սկզբից սերմի ծլման ու աճման համար հո-
ղում բարենպաստ պայմաններ լինեն. իսկ դրա
համար հարկավոր է, վոր բամբակի սերմը ընկնի
լավ պատրաստված հողի մեջ. — ուր լինի սերմի
ծլման համար անհրաժեշտ քանակությամբ բավա-
կանաչափ խոնավութիւն և հարկավոր չափով
տաքութիւն:

Ի՞նչ պայմաններում բամբակի սերմը ալդ
բոլորը կգտնի հողում:

ՇՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Արտի պատրաստումը հսկայական նշանա-
կութիւն ունի: Դաշտը վորքան լավ մշակված
լինի, այնքան բուլսի աճումը լավ կլինի, իհարկե
լեթե անացլալ պայմանները միորինակ են: Ամե-
նից լավ է արտը հերկել աշնանը: Աշնանը հեր-
կած հողը խոնավութիւնը լավ է ներս ծծում և
լավ էլ պահում է այն. մի հանգամանք, վորը
ամուսնը, բամբակենու աճման ու զարգացման
վրա լավ է ազդում: Բացի այդ, դաշտը հերկել
աշնանը նշանակում է՝ զարնան աշխատանքների
բեռը զգալիապես թեթեւացնել, վորովհետև ալդ-
պիսի դեպքում գարնանը կմնա միմիայն կրկնա-

վարը, վոր անհամեմատ հեշտ ե և քիչ ժամանակ կպահանջի: Գարնանը հողի մեակումը արագ յեմ շուտ վեշացնելով, բամբակացանն ել հեշտությամբ կարելի յե շուտ կտատել:

Վորպեսզի լավ հերկ ստացվի, հարկավոր ե վարելիս ուշադրութիւն դարձնել գետնի խոնավութիւնն աստիճանի վրա: Միայն հողի միջին աստիճանի խոնավութիւնն դեպքում, հնարավոր կլինի սերմի ծլման ու աճման համար բարենպաստ պայմաններ ստեղծել: Արաթից հետո հողը նորից չորացնել—վտանգավոր ե, վորովհետեւ այդպիսի դեպքերում հողում բամբակի սերմին անհրաժեշտ քանակութեամբ խոնավութիւնն չի լինի իսկ առանց այդ խոնավութիւնն սերմը ծել ու աճել—չի կարող: Մյուս կողմից, լեթե վարը կատարվի չափազանց խոնավ հողում, այդ դեպքում կստացվի խոշոր հողակոշտեր, վորոնք կնպաստեն խոնավութիւնն արագ գոլորշիացման և կխանգարեն սերմի ծլմանը:

Այսպես ուրեմն, վորպեսզի սերմերը միաժամանակ և արագ ծլեն ու բուսնեն, հարկավոր ե վոր բամբակացան գլուղացին նախորոք հողը պատրաստի ու մշակի և այդպիսով սերմերը հարկավոր խոնավութեամբ ու ոգով վաղորոք ապահովի:

Միմիայն լավ կատարված հերկի դեպքում, բամբակի սերմերը, հողում բավականաչափ խո-

նավութիւն և ող գտնելով, կկարողանան իր ժամանակին ծիւեր արձակել, այսինքն կսկսեն զարգանալ առանց ուշացումների իսկ այդ կարտահայտվի նրանով, վոր բամբակներն էժաղկի և կնգուղներ (կոկոններ) կտա ավելի վաղ, իսկ այդ վերջինները կբացվեն իր ժամանակին:

ԲԱՄԲԱԿ ԵՐԲ ԾԱՆԵԼ

Բամբակի ցանքը կարելի յե սկսել այն ժամանակ, յերբ տվյալ վայրում կանցնի գարնան վերջին սառնամանիքների ժամանակաշրջանը: **Հնդհանրապես** այդ ժամանակամիջոցը բամբակացան գլուղացիներին լավ հայտնի յե: Համենայն դեպս բամբակացանի ժամանակի նկատմամբ պիտի վերաբերվել զիտակցորեն՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները:

ՎԱՂԱԺԱՍ ԾԱՆԲ

Վորպեսզի բամբակի սերմը ծիւ արձակի և բուսնի, խոնավութիւնից և ողից բացի (տես վերիում) նրան անհրաժեշտ ե վորոշ քանակութեամբ նաեւ տաքութիւն: Գլուղատնտեսական փորձակայանների հետազոտութիւնների համաձայն բուլի ծլման համար անհրաժեշտ տաքութիւն լավագուցն աստիճանը համարվում ե

25—30-ը: Սերմի զարթնումը սկսվում է ավելի ցածր տարածության տակ (17 աստիճանից բարձր). սակայն, այդ դեպքում, ծվման արագությունը զգալիորեն պակասում է: Հետևաբար, լեթե սերմը ցանենք ժամանակից շատ առաջ, բավականաչափ տաքություն չլինելու պատճառով, իզուր տեղը դրանք պարկած պիտի մնան հողի մեջ. ինչպիսի դեպքերում հաճախ սերմը փտում է ու վոշնջանում: Այդ պարզ յերևում է հետևյալ աղյուսակից:

Փչացած ծանրի ժամանակը		ծիլի ջանակը
ապրիլի 10-ին	45	
» 20-ին	10	
» 21-ին	2	
մայիսի 20-ին	2	

Այսպես ուրեմն, վաղաժամ ցանքերի դեպքում ծիլերը հայտնվում են մեծ ուշացումներով և հաճախ լինում են թույլ ու նվազ: Այդպիսի նվազ ծիլերը սովորաբար հեշտությամբ են հիվանդությունների լենթարկվում և վոշնջանում կամ փլատուներից և կամ հիվանդություններից: Ժամանակից շատ առաջ կատարված ցանքերի ընդհանուր պատկերը միշտ ել լինում է նոսր, ընդհատ-ընդհատ—նվազ ու թույլ բույսերով: Հակա-

ռակ այն լենթադրության, թե այդ ցանքերի կանոնավոր զարգացումը ապահովված է, վորովհետև դրա համար անհրաժեշտ բավականաչափ ժամանակ կա առջևում—այնուամենայնիվ այդպիսի ցանքերը միշտ ել պակաս բերք են տալիս:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿՍԱՐՎԱԾ ՑԱՆՔԵՐ

Ժամանակին ցանված բամբակի զարգացումը ընթանում է այլ կերպ: Ինչպիսի ցանքը համարել ժամանակին կատարված:

Բամբակացանի լավագույն ժամանակաշրջանը սկսվում է ապրիլի լերկորդ կիսից: Ապրիլի 20—25-ից սկսած համարձակ կերպով կարելի է ցանել:

Սալյան-Մուղանի, Շիրվանի և Նախիջևանի շրջաններում, ուր կլիման համեմատաբար տաք է՝ բամբակացանը սկսելու լավագույն ժամկետը—ապրիլի 20-ն է:

Հարաբարում, Գանձակի, Ղազախի շրջաններում, ինչպես նաև Հայաստանում և Արևելյան Վրաստանում լավ կլիմի բամբակացանը սկսել ապրիլ 25-ից:

Այսպես ուրեմն, ժամանակին կատարված ցանքերը այնպիսիքն են, վորոնք կատարված են ապրիլի 20 25-ից մինչև մայիսի 10-ը: Այդ ժամանակաշրջանում ցանված սերմերի ծվման ու

աճման համար հողում ամենաբարենպաստ նպաստներն են լինում: Այս ժամանակաշրջանում դետինը բավականաչափ տաքանում է, վորի պատճառով ել սերմերը բուսնում են՝ 5-6 ուրից և միաժամանակ:

ՌԵՇԱՑԱԾ ՑԱՆՔԵՐ

Բայց ահա, անցնում է և մայիսի 10-ը: Արեգակը որ-ավելը սկսում է ավելի ուժեղ ալրել: Ուղից զգացվում է խանձող ամառվա մոտենալը: Բամբակացանի ժամանակն արդեն անցել է: Ցանել ալմս նշանակում է՝ չստանալ բերքի մի վորոշ մասը, վորը բամբակացան գլուղացին ալ պայմաններում, հեշտութեամբ կարող եր ստանալ, յեթե ցաներ ժամանակին, ալսինքն—մինչև մայիսի 10-ը: Ճշմարիտ է, թեև ալդ ժամանակ տաքութունը բավականաչափ բարձր է լինում, վորի պատճառով ել, հողում բավականաչափ խոնավութուն լինելու դեպքում, ծիլերը բուսնում են արագ, նույնիսկ ավելի արագ, քան ժամանակին կատարված ցանքի դեպքում: Բայց բամբակացան գլուղացին, ալդ համերաշխ, միաժամանակ բուսած կանաչ ծիլերով, իզուր կուրախանա՝ մտածելով, թե դրանք իրեն լրիվ բերք կբերեն: Բայց իրոք ալդ հույսերն ու սպասելիքները չեն արդարանում:

Հաճախ այն կանաչ, մատաղ ծիլերն ու տերևները խանձվում ու չորանում են արեգակից սաստիկ տաքացած գետնից: Բայց գլխավոր վտանգը կայանում է նրանում, վոր ուշ ցանքսի դեպքում կրճատվում է բույսի կյանքի տևողութունը.— ալսինքն՝ ցանքից մինչև, բամբակենուն մահ պատճառող, աշնան ցրտերը,—քիչ ժամանակ է մնում: Ուշ ցանքսից ստացված բամբակենիները ծաղկում և պտուղ են տալիս շատ ուշ—աշնան մոտերքը, յերբ տաքութունը համեմատաբար քիչ է լինում: Հայտնի չե, վորքան տաքութունը քիչ է, այնքան ել բամբակենու կնգուղները դանդաղ են զարգանում: ուստի և նրանց հասունանալու համար շատ ել ժամանակ է պահանջվում: Հետեվաբար, ուշ ցանելու հետևանքով բամբակենու տունկը զրկվում է, իր լրիվ զարգացման համար, անհրաժեշտ ժամանակի տևողութունից: Ցանքի ուշացումը հատկապես կորստաբեր է այն շրջանում՝ ուր ամառը կարճատև է և ուր, հենց աշնան սկզբից տաքութունը զգալիապես և արագ է ընկնում: ուր աշնանային սկզբնական ցրտերը հենց հոկտեմբերից են վրա հասնում:

Անդրկովկասում ալգալիսի շրջաններից են՝ Ղարաբաղը, Գանձակի և Ղազախի շրջանները, Հայաստանն ու Արևելյան Վրաստանը, վորտեղեքում բամբակի ցանքը, ինչ գնով ել վոր լինի,

պիտի լրիվ ավարտել մինչև մայիսի 10-ը: Ուշացման ամեն մի ավելորդ ուրը նշանակում է—կորուստ բամբակի բերքի, լեկամուտի կորուստ—բամբակացան գլուղացու համար, մանվածքի կորուստ—պետուկյան համար:

Վերևում մենք ցույց տվինք, վոր տարբեր ժամանակներում կատարած ցանքերի դեպքում—ցանքսից մինչև բամբակենու բուսնելը լեղած որերի թիվը տարբեր է լինում: Վորպեսզի այդ ավելի համոզեցուցիչ լինի, բերենք մեր գլուղատնտեսական փորձադաշտերից մեկի ձեռք բերված հետևյալ թվերը՝

Ցանքի ժամանակը Ցանքից մինչև բուսնելն
լեղած որերը

մարտի 31-ին	23	որ
ապրիլ 10-ին	13	»
» 20-ին	10	»
» 30-ին	6	»
մայիս 10-ին	6	»

Բամբակ ցանող յուրաքանչյուր գլուղացու համար այս թվերից պարզվում է, վոր ճիշտ ժամանակին ցանված սերմը բուսնում է շուտ, և վոր գլխավորն է՝ միաժամանակ: Բույսի կյանքը շուտ է սկսվում, այդ պատճառով էլ բամբակենու կնգուղները հասունանալու համար ավելի լերկա-

բատե ժամանակամիջոց է լինում. հետևաբար, լեթե մնացող պայմանները անսպաստ չեն՝ ավելի բերք կտացվի:

Այստեղ մի հանգամանք միայն կարևոր ենք համարում ընդգծել, վորը շարունակ հարկավոր է ի նկատի ունենալ: Յերբ մենք վերևում խոսեցինք ծիլերի բուսնելու և հիշատակեցինք բամբակենու կյանքի տևողության մասին, մենք այդ ժամկետները հաշվեցինք սերմը հողը գցելու ըուպելից սկսած. իհարկե միայն այնպիսի դեպքերում, լերբ հենց հողի մեջ ընկնելու ըուպելից սկսած, սերմը նրանում կգտնի իր ծրման ու աճման համար անհրաժեշտ քանակությունը խոնավություն: Ուրիշ խոսքով, մեր բամբակացան շրջանների համար այդ պայմանները պահպանված կլինեն, լեթե առաքը (ցանքից առաջ վոռողումը), և ապա հետ առաթյան հերկը կատարված են իր ժամանակին և լավ: Սակայն, ինչպես հայտնի լե, անդրկովկասյան մի քանի բամբակացան շրջաններում բամբակը ցանում են վոչ ըստ առաթի (ցանքսից առաջ վոռողած արտում), այլ համաձայն սապսոնվարի (վոռողում ցանքսից հետո): Բայց ցանքը կատարել սապսոնվարի պայմաններում—դեռ քիչ է. հարկավոր է հողը գցած սերմին, վորքան կարելի է շուտով, ջուր տալ, վորովհետև քանի դեռ ցանքսատերը արտը

չի շրել, սերմը չի սկսում աճել: Այդ պատճառով, համաձայն սապսուվարի ցանք կատարող շրջաններում սերմի ծլման ժամկետի և բամբակենու կյանքի տևողության ժամանակի հաշիվը պիտի կատարել վոչ թե ցանելու ընդելից, այլ՝ հետցանքյան վոռոգումից: Ուրեմն պարզ է, թե սապսուվարի դեպքում շրելը ինչ նշանակություն ունի և թե վորքան բամբակ ցանող գյուղացին պիտի աճապարի՝ հետցանքյան վոռոգում կատարելու համար: Ուշացնել հետցանքյան վոռոգումը—նշանակում է ուշացնել ցանքը: Բամբակենու շուր տալ ցանքից մի շաբաթ հետո—նշանակում է ցանքը կատարած լինել մի շաբաթով ուշ: Իսկ ցանքը կատարել մի շաբաթ ուշ—այդ նշանակում է բերքի մի զգալի մասը կորցնել:

Մինչև այժմ մենք խոսեցինք բամբակի ցանքի և բամբակենու բուսնելու ժամանակների մասին: Այժմ հետևենք և տեսնենք, թե տարբեր ժամանակներում ցանված բամբակենու հետագա զարգացումը ինչպես է ընթանում. և թե բամբակ ցանող գյուղացին, տարբեր ժամանակներում կատարած ցանքերից, ինչպիսի բերք է ստանում:

Միջը բուսի համար նույնն է, ինչ մարդու համար մանկությունը:

Յերբ լերեխան կուշտ է մեծանում, և լերբ մայրը նրա վրա հաղուկ խնամք է թափում—լերեխան աճում, մեծանում և դառնում է առողջ, ուժեղ մի մարդ. և ընդհակառակը, չկա խնամք կամ հոգատարություն—լերեխայից ստացվում է թուլ, հիվանդոտ մի հաշմանդամ:

Բամբակ ցանող գյուղացին ևս պարտավոր է մտածել իր ցանած բամբակի մասին՝ նրա կյանքի հենց առաջին որից սկսած: Նա պարտավոր է բամբակի ցանքը խնամել—շրել, ժամանակին քահանել և շարքերից դուրս քաշել ավելորդ տունկերը: Այդպես վարվելու դեպքում, շատ չանցած դուք կտեսնեք, վոր այդ փոքրիկ, նուրբ ծիլերից աճում, բարձրանում են առողջ և ուժեղ թփեր:

Սակայն հետաքրքիր է իմանալ, թե ցանքսի ժամկետները ինչպես են ադրադառնում բամբակենու զարգացման վրա և թե, արդյո՞ք հնարավոր է բամբակենու ուշ ծլելու բացը ծածկել հատուկ խնամքով:

Այդ հարցերի հետազոտությունը զբաղվել և ներկայումս էլ շարունակում են զբաղվել մեր գյուղատնտեսական փորձակալանները, վորոնք ահա թե ինչ լեզրակացություն են հանդել՝ իր ջամանակին, այսինքն ապրիլ 20—25-ից մինչև մայիս 10-ը ցանված բամբակի բոլոր ամռանը լի-

71-90/83

16681



նույն և մեծ: Գլուղատնտեսները միևնույն որում
չափել են տարբեր ժամանակներում ցանված
բանբակենիների բույր և հետևյալ հետաքրքիր
թվերն են ստացել՝

Ցանֆը յերբ և կատարված	Բամբակենու բույր
Ապրիլի 20-ին	35 սմ.
» 30-ին	37 »
Մայիսի 10-ին	29 »
» 20-ին	21 »

Այս թվերից պարզ լերևում և, վոր բարձր
հասակ ունեցել են այն թփերը, վորոնք ցանված
են լեղել ապրիլի 20-ից մինչև մայիսի 10-ը. ի-
հարկե, լեթե բոլոր ցանքերի մյուս, մնացյալ
պայմանները լեղել են միորինակ ու համահավա-
սար: Ընդհակառակը, մայիսի 20 ի ցանքի թփե-
րը ունեցել են 8 սանտիմով փոքր հասակ, քան
մայիսի 10-ի կատարած ցանքսերի թփերը:

Ցանքի ժամանակը անխուսափելի կերպով
անմիջականորեն անդրադառնում և նաև բամբա-
կենու ծաղկման ժամանակի վրա. այսինքն—լեթե
ցանքը կատարված և ժամանակին՝ ծաղիկներն
ել բացվում են ժամանակին. իսկ լեթե ցանքը
կատարված և ուշ՝ թփերը ծաղկում են ուշ: Այդ
պարզ լերևում և հետևյալ թվերից՝

Ցեթե ցանֆը կատարված և	Թփերը սկսում են ծաղկել՝
Ապրիլ—20-ին	հունիս 24-ին
» —30-ին	» 29-ին
Մայիս—10-ին	հուլիսի 10-ին
» —20-ին	» 16-ին
» —30-ին	» 29-ին

Այսպես ուրեմն, վորքան բամբակ ցանող գյու-
ղացին ուշացնում և բանբակի ցանքը, նույնքան
ուշանում և թփերի ծաղկումը: Չպիտի մոռա-
նալ, վոր ամբողջապես ծաղկման ժամանակից և
կախված բամբակենու կնգուղների (կոկոնների)
բացման սկզբնավորութունը: Բամբակենին շուտ
և սկսում ծաղկել—կնգուղները շուտ են սկսում
բացվել:

Բամբակենու առանձնահատկութուններից,
վորոնցով նա տարբերվում և գլուղատնտեսական
շատ բոյսերից, մեկն էլ այն և, վոր բամբակենին
տալիք ամբողջ բերքը միաժամանակ չի տալիս:
Ինչպես ձեզ բոլորիդ լավ հայտնի և, ցորենի և
գարու բերքը հասնում և կարճ ժամանակամիջո-
ցում, այդ պատճառով դրանց ամբողջ բերքը
կարելի և հավաքել միաժամանակ-մի անգամից:
Միանգամայն այլ և բամբակենունը: Բամբակե-
նու ծաղկումը և դրա կապակցությամբ նաև կըն-
գուղներինը (կոկոններին) բացվելը կատարվում և

աստիճանաբար ու խիստ հերթականութեամբ՝ ճշուղ առ ճշուղ—սկսած ցածից և հետզհետե բարձրանալով դեպի վեր: Բայց այդ դեռ քիչ է: Բամբակենու ծաղկելուց մինչև կնգուղներին բացվելը անհրաժեշտաբար հարկավոր է, վոր վորոշ ժամանակաշրջան անցնի. վորի ընթացքում ծաղիկներից զարգանում են և ուռչում կնգուղները, վորոնք աստիճանաբար զարգանում են ու հասունանում. իսկ ստացված կնգուղների ներսում կհասունանա բամբակացան գլուղացու սպասած հումուլթ բամբակը—գալիք բերքի հուլիսը:

Քանի վոր յուրաքանչյուր կնգուղի (կոկոնի) հասունանալու համար պահանջվում է վորոշ անհրաժեշտ քանակութեամբ ժամանակաշրջան, հետևաբար ցանքի ժամանակը անպայմանորեն ունի խոշոր և գլխավոր նշանակություն:

Այժմս հատուկ ուշադրութիւն դարձնենք հետևյալ թվերի վրա, վորոնք ցույց են տալիս, թե տարբեր ժամանակներում ցանված բամբակենու կնգուղները (կոկոնները) լերբ են սկսում բացվել:

Յերբ ե ցանված

Ապրիլի 21-ին

Մայիսի 1-ին

» 11-ին

» 21-ին

» 31-ին

կնգուղն. յերբ են

սկսում բացվել

սեպտեմբերի 8-ին

» 13-ին

» 18-ին

» 23-ին

հոկտեմբերի 3-ին

Այս ժամկետներում կնգուղները միայն սկսում են բացվել. իհարկե, լեթե միայն կլիմայական պայմանները բարենպաստ են ու բամբակենու խնամքը ըստ ամենայնի լավ է. իսկ կնգուղների ընդհանուր բացվելը, վորի դեպքում բամբակացան գլուղացին կարող է ձեռնամուխ լինել բամբակի հավաքման աշխատանքներին՝ տեղի լե ունենում վերոգրյալ ժամկետներից ավելի ուշ: Իսկ լեթե լեղանակները ամռանը վատ լինեն՝ կնգուղների բացվելը ել ավելի են ուշանում: Յեթե կնգուղների զարգացման համար լեղած ժամանակը լինի անբավարար՝ վրա հասած սառնամանիքներից բամբակենին սառչում վոչընչանում է այդպիսի դեպքերում կնգուղները հասունանալ և բերք տալ չեն կարող:


Այդ վերաբերում է յուրաքանչյուր կնգուղին զատ-զատ վերցրած. իսկ լեթե ինկատի ունենանք արտի բոլոր թվերի վրա լեղած վողջ կնգուղներին, այդ դեպքում հեշտ կլինի հասկանալ, վոր վորքան բամբակենու ծաղկելուց մինչև սառնամանիքների սկիզբը լեղած ժամանակաշրջանը մեծ լինի, այնքան ավելի շատ կընդուղներ կզարգանան, կհասունանան, կբացվեն և բամբակացան գլուղացուն համեմատաբար մեծ բերք կտան. և ընդհակառակը—ուշ ցանքսի դեպքում կնգուղների մի զգալի մասը, վրա հասած

սառնամանիքների հետևանքով, տակավին չհասունացած ու չբացված վոջնաձևում են և գյուղացուն վոջ մի բերք չեն տալիս: Իհարկե այդ բոլորը վերաբերում են բամբակի ափսիսի արտերին, վորոնց վրա բամբակ ցանող գյուղացին բավականաչափ լավ խնամք է դործադրել ժամանակին մշակել ու ջրել: Ճամաքած ու չորացած արտում թեև բամբակենու կնգուղները բացվում են անսովոր արագությամբ, բայց և ափսիս այդպիսի արտերից քիչ բերք է ստացվում, չորացած թփի կնգուղներից ստացված հումուլթ բամբակը լինում է վատ վորակի: Ուստի և բամբակի արտը ծարավ թողնելով արագացնել բամբակենու հասունանալը — նշանակում է ինքնիրեն ջլասել: Միմիայն իր ժամանակին ցանելու և կանոնավոր խնամքի (արտի ժամանակին կատարված մշակումն ու ջրելը) դեպքում կնգուղները կսկսեն ճիշտ ժամանակին բացվել, և լավ վորակի հումուլթ, բամբակի խոշոր բերք կտան:

Հետևյալ նկարի վրա դուք կտեսնեք՝ թե բամբակենու կնգուղների բացվելը ինչպես է ընթանում և թե տարբեր ժամանակներում ցանված բամբակենիներից վորի վրա վորքան կընգուղներ են կարողանում հասունանալ:

Ինչպես տեսնում եք նկարում, առաջին յերկու թփերի, վորոնք ցանված են ապրիլ 20 ին

և 30-ին, բոլոր կնգուղները (կոկոնները) անխրտիր ցածից սկսած մինչև ամենավերինը, կարողացել են բացվել: Հաջորդ թփերից նրանք, վորոնք համեմատաբար ուշ են ցանված, իրենց



Նկ. № 1, Տարբեր ժամանակներում ցանված բամբակենիների բացված կնգուղների (կոկոնների) թիվը:

վրա ավելի քիչ քանակությամբ կնգուղներ ունենա, Հետևաբար բամբակացան գյուղացին ստանալու ավելի քիչ բերք ունի: Մայիս 30-ին ցանված թփի վրա հազիվ յերեք կնգուղ միայն կարողացել են ամբողջապես բացվել. մնացյալ բոլոր կնգուղները, հասունանալու համար անհրաժեշտ ժամանակաշրջան չունենալով, կորստյան են մատնված:

Բամբակ ցանող գյուղացին, բամբակացանը ուշանալու դեպքում, վորքան բերք է կորցնում:

վումանց թվում ե, վոր ուշացած ցանքը (մայիս 10-ից հետո) վերջնական հաշվով ֆաա չի բերում: Բայց այդ միայն թվում ե: Յուրաքանչյուր թփի մի քանի չբացված կնգուղների ընդհանուր գումարը կազմում ե բերքի չհավաքած, բավականին խոշոր մի մասը: Որինակ, համաձայն Թուրքեստանի պուլգատնտեսական փորձակայանի կատարած հաշվումների, տարբեր ժամանակներում ցանված բամբակի արտերից ստացված բերքերի տարբերությունը արտահայտվում ե հետևյալ, բավականին պերճախոս թվերով

Յերբ ե ցանված.

1 հեկտարի բերք.

Ապրիլ 20 — 30-ը

983 կգր (60 փութ)

Մայիս 10-ին

745 » (45,5 »)

» 20-ին

622 » (38 »)


» 30-ին

410 » (25 »)

Յեթե այս թվերի փոխհարաբերությունը արտահայտելու լինենք նկարներով հետևյալ համեմատական տարբերություն արտահայտող նրկարը կունենանք (նկ. 2 տես 25 եջ):

Այս թվերը պարզորոշ կերպով հայտնում են, վոր բամբակացանի ուշացումով բերքի հսկայական կորուստ ենք ունենում: Յեվ իրոք ապրիլին և մայիսի 20-ին կատարած ցանքերի յուրաքանչյուր

1 հեկտ. տված բերքի տարբերությունը հասնում 361 կիլոգրամի կամ 22 փութի: Իսկ յեթե պատկերացնենք և ինկատի ունենանք, վոր մեզանում բամբակի ցանքերը հարյուրավոր հեկտար տարածություններ են բռնում, այն ժամանակ հեշտ կլինի հասկանալ, թե բամբակացանի ուշացման հետևանքով մենք քանի-քանի հազարավոր տոնն



Նկ. 2. Բամբակացանը յերբ ե կատարված և ինչպիսի համեմատական բերք ե ստացված:

բամբակի հումուլթ ենք կորցնում: Յեթե դրան ավելացնենք նաև այն, վոր ուշ կատարած ցանքից ստացած բամբակը համեմատաբար ցածր վորակի ե լինում և քիչ թել ե տալիս, այն ժամանակ ել ավելի պարզ կլինի, վոր կորուստը հսկայական ե:

Յեվ այսպես, վերևում բերված տեղեկու-

բակենուն անհրաժեշտ ընթացիկ խնամքը, հաշտ
և համերաշխ կերպով իր ժամանակին կատա-
րելով, կոտնտեսութիւնը կստանա լրիւ բերք և
կկարողանա ստացած բերքը ժամանակին հանձ-
նել՝ կամ մոտակա զնման կայանին և կամ բամ-
բակազտիչ գործարանին։ Արդիւնքը կլինի այն,
վոր այդպիսի կոյսնտեսութիւնների բամբակագոր-
ծութիւնից մեծ յեկամուտներ կստանան և միա-
ժամանակ պետութեան կտան առատ և լավ վո-
րակի նուրբ թել, վորը կուղարկվի խորհրդային
գործարանները—վերամշակման յենթարկելու հա-
մար։ Այդ գործարաններում բամբակի մանվածք-
ներից կպատրաստեն դանազան տեսակի գործ-
վածքներ ու կտորներ և այդպիսիք կուղարկեն
գլուղերը—բամբակացան գլուղացիներին։



ՀՀ Ազգային գրադարան



NL0289611

18486

126

801



ՀԱՅԵՆ ԵՆ ԿԱՐԳ.